


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻՍԻՐ

Նամակ կամ որ եւ գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲՆԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 80
» վեցամսեայ » 50
» Թարգմանիչ » 25
» » վեցամսեայ » 14
Թղթարարի ծախքը խմբագրութեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ԵԳԻՊՏՈՍ՝ ԳՈՐԾԻ ՏԵՍԱԿԵՏՈՎ

—Ո՛րք, առ եգիպտոսի աչքի յաւեր, մը-
ժեղները, տաքը, փաշին, ջուրը, անտանելի-
նն...

Հին օրերէ մնացած այս գանդատը, շատ
մը աւանդական սովորութիւններու պէս, տե-
ղի տուած է քաղաքակրթութեան շինիչ ու
բարենորոգիչ ընթացքին առջեւ։ Հիմակ, Փա-
րաօններու մայրաքաղաքն այցելող մը ո՛չ մի-
այն ամեն բան տանելի կը գտնէ, նոյն իսկ
ամառուան տաքը, այլ և մինչեւ մէկ աստի-
ճան ակտիվութիւն։ Դեռ մինչեւ կէս դարէ պա-
կաս ժամանակ առաջ, ջուրը կը զտուէր նա-
հապետական գրութեամբ ու սառնոցի վրայ
գաղափար չի կար։ Նեղ, անհարթ, կեղտոտ
փողոցներ՝ ապականութեան ճշմարիտ բոյներ
էին, տաքը իրաւ խորշերի դարձանքով, ծա-
ռալարդ լայն պողոտաներ, երկկողմանի մա-
քուր մայրեր, ջուրի լիառատ սրտիւմ ու մե-
քենական բաշխումը անիրականապէս ծրագրի-
ներ կերելէին։ Կամայ կամայ զիտութեան
հնարքները ու մարդուն ճարտար ձեռքը գար-
մանեցին բնութեան զրկանքները, առատա-
ձեռն փոխարքայի մը ու հանճարեղ նախա-
բարապետի մը օրով մանաւանդ։ Ու բարե-
զարգութիւնը, առողջապահիկ պայմանները,
հանգստաւետութեան միջոցները, հաշտութեան
գիւրութիւնները կընդլայնուին ու
դէպի կատարելագործութիւն կը տարուին առ-
տիճանաբար։ Առաջ ամառը եւրոպայ երթալը
պէտք մը՝ էր Գահիրէ բնակող հարուստին հա-
մար, այսօր սիրճանք մըն է պարզապէս։

Նոյն բաները կրնանք ըսել նաեւ Ալեք-
սանդրիոյ համար որ եւրոպական մեծ քաղա-
քէ մը տարբերութիւն չունի։

Անցեալ ձմեռ կատարուած մարդահա-
մարը վեցուկէս միլիոն գտաւ երկրին բնակ-
չաց թիւը, տասը տարուան մէջ ահագին յա-
ւելումով մը։ Այս բազմամարդութիւն մինակ
բնիկներէն առաջ չի գար, այլ աշխարհի ա-
մեն կողմէ վազող եկող օտարներէ որոնք ի-
րենց գրամին կամ արհեստին շահագործման
ասպարէզ կը գտնեն հոս ու կը մնան մեծ
մասով։

Հայ գրամատները, վաճառականներ,
արուեստագէտներ, արհեստաւորներ ալ իրենց
ուշադրութիւնը Պոլսէն եգիպտոս դարձուցին,
1896էն ի վեր մանաւանդ, և առանց յախուսն

ձեռնարկութեանց մէջ մտնելու՝ հրապարակը,
գործերը կանխաւ վճարելով, ստանձնադրելով,
եկան ու հետզհետէ կուգան այս երկու բա-
նուկ քաղաքներուն մէջ հաստատուիլ։ Եւ շատ
լաւ կընեն։ Կը փափաղէինք որ անոնց հետե-
ւորներուն թիւը ստուարանար հետզհետէ։

Երբոր գաղթականներու վերադարձին
խնդիրը վէճի առարկայ դարձաւ այս էջերուն
մէջ, մենք ալ մեր կողմէ՝ համաժողովուրդե-
ցանք որ այդ թափառայած խեղճեր երթան
գտնել իրենց տուն տեղը, իրենց օրապահիկը
ճարելու միջոցը, իրենց վարժուած միջավայրը։
Հասարակ բանաւորին, պլտիկ արհեստաւորին,
առանց գրամի խանութպանին, հողագործու-
թեան, բեռնակրութեան կամ այս տեսակ աշ-
խատանքներու մէջ ապրուստ միառողին ան-
յարմար է այս երկիր, վասնզի ֆէլլա՛հ ա-
ւելի՛ սակաւապէտ է, աւելի՛ ժիւր, աւելի՛
սովուն։ Իր ծննդավայրն է վերջապէս ուր
ամեն միջման դէմ կը դնէ՝ չարքաշութեան
կողմէ։ Խեղճ հայ պանդուխտը կը հիւժի,
կը տկարանայ հոս, ու շատ անգամ անօթի
կը մնայ։

Իսկ այն գաղականները որ ո՛չ թէ իրեն-
ցաղթական ու հոտանքէ մը միւլած ակամայ
կուգայ, այլ ձեռնբեցութեան սգիով — այն-
պէս ինչպէս անգլիացին կը թողու Լոնտոնը՝
Ալբրիկէի խորքը շահաբեր ձեռնարկութիւն
մը փնտրելու կամ Բարիդիին իր պոլիտե-
Մատակաւորարի մէջ գործարան մը հաստա-
տելու, — այդ գաղականները հեռատես ու խե-
ղացի փորձ մը կընեն որ պիտի յաջողի։ Վեր-
ջին մէկ տարուան միջոցին, Գահիրէի մէջ տաս-
նեակներով կը համբոյն գոհարաւաճառներ
ու սակերիչներ, արգուշադի խանութներ,
ճերմակեղէնի ու տապաղի վաճառատուններ,
ու դեռ շատ մը առուստրի ու արուեստի
վերաբերող գործեր զորս հայեր եկան հաս-
տատեցին այստեղ, օրինաւոր վտասակի և
ապահով կեանքի կրկին տեսակէտներով։ Եւ
ասոնք յաջողապէս կը մրցին խաղաղի արուես-
տագէտին, արար խանութպանին կամ յոյն
վաճառականին հետ։

Այս գեղեցիկ, ազատ ու բարեբեր եր-
կիրը, որ Սուտանի գրաւումով աւելի կըն-
դարձակի ու կը հարստանայ, միշտ շահա-
գործման լայն ասպարէզ մը կընծայէ ճարտիկ
գրամատներին ու ճշմարիտ արուեստաւորին,
ինչ ազդի ալ պատկանին, բաւական է որ
յարատեւել ու աշխատիլ գիտնան։

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ

Առանց մտնելու ընկերավորական խոստատիւ-
թեան վերաբերող խնդիրներու մէջ որոնք մեր ազ-
գին համար հիմայ այն նշանակութիւնը ունին ինչ որ
պտուղը կամ քաղցրաւենին ունի քաղցած մարդուն
համար, անուրանալի ճշմարտութիւն մըն է թէ՛ որքան
շատ ըլլան երկրի մը հարուստները այնքան աւելի կող-
տուի հասարակութիւնը։ Դրամը իր ամենէն կեղծո-
նացական վիճակին մէջ իսկ, միշտ որով չափով մը
չըջարեւութեան կը հանուի հրապարակին վրայ և իր
համեմատական վայելքները կը պարզեւէ զանազան
գոտակարգերու։ Դժբաղդութիւնը այն տոէն միայն
անդաւանելի կըլլայ երբ հասարակութեան մը թէ՛
մեծամասնութիւնը և թէ՛ փոքրամասնութիւնը դրա-
մական հարստութենէ կը զրկուին։ Հայ դրամատէր
դասակարգը, ուրեմն, մեծ ոյժ մըն էր մեր Ազգին
համար ու մեր ժողովուրդի շահեւէրէ պարհանջէին որ
Հայաստանի ու Կ. Պոլսոյ հայկական հարստու-
թիւնները չի վնասուին վերջին տխուր դէպքերուն տոթով։

* * *

Թուրքիոյ ամէն կողմը հայ հարստանքը գանգա-
տի ու զժգոհութեան մեծ պատճառներ ունեցած չեն
սակ. կատափարութենէն։ Քիւրտէն ու թուրքէն հարս-
տահարուող տարրը ընդհանրապէս գիւղացի ու աղ-
քատ դասակարգը եղած է։ Հայ հարստար սաղկելով
մեծ քաղաքներու մէջ և տեղական կոտակարգութեան
հետ առանձին շահերով կապուած ըլլալով՝ համեմա-
տական ապահովութիւն վայելած է։ Կեանքի, խնչքի
և պատիւի, Այսպիսի պատճառներով հայ մեծատուն
դասակարգը չէ կրցած զգալ ժողովուրդի ստատուող
մասին ցտերը, ու չէ ուզած մասնակցիլ անոր հա-
ւարական զիւններուն կամ գանգատներուն, այդ-
օրինակ ընթացք մը վնասարեւ նկատելով իր տն-
նական շահերուն։

Հայ հարստար շարունակ մոտոմած է որ իր և
զրկուած դասակարգի շահերուն միջեւ միութեան
ոեկոյէ կապ չկայ։ Միեւնոյն մասածումները ունեցած
է, միւս կողմէն, աղքատ դասակարգը հարստանքու
մասին։

Տնտեսական այս մեծ սխալը երկու դասա-
կարգները հետզհետէ իրարմէ պաղեցուց ու երկու-
րին ալ կործանման պատճառ եղաւ։

* * *

Թուրքիոյ մէջ պատահած դէպքերը ու տես-
նուած երեւոյթները իրենց առանձնայատկութիւնն
ունին որ կրնայ շատ անգամ ուղիւ տրամաբանու-
թենէ չեղիլ։ Այս պարագան մարէ հեռացնելու չէ
ամէն անգամ որ կուգենք այդ երկրին գործերը մեր
ուսումնասիրութեան ստաթիւց ընել։

Մարդկորէն ու տրամաբանօրէն խորհելով, երկ-
րի մը կատակարարութիւնը այնքան աւելի զոհ մնալու
է որքան այդ երկիրը նիւթապէս զօրանայ թարգա-
ւածի։

Թուրքիոյ մէջ ասոր հակառակը կը պատահի, իւ-
րանութիւնը կարծես ամէն ջանք ի գործ կը դնէ որ...

պէսպէս երկրին տնտեսական այժմ քայքայուի: Հոգե-
բանական երեւոյթ մըն է ասիկայ որուն խորունկը
կարծէ քիչ մը թափանցել:

Դժբաղդարար թուրքերուն համար, երկրին հը-
ստատակ տարրը իշխող տարրին վրայ ամէն առաւե-
րութիւն կը վայելէ բարոյական ու մտաւորական աշի-
ւախի յատկութիւններով որոնք զինքը երկրին իրական
տէրը կը դարձնեն, անուն մը միայն թողլով միւսին:

Աշխատելու, ստեղծելու ընդունակութիւնն
զուրկ, ապաւինած Ֆիզիքական իրողութիւն՝ տիրապե-
տող տարրը ուրիշ կերպով զրուի չի կրնար եղել հարս-
տակ ցեղերուն հետ բայց եթէ զանոնք կեղծեցով և
անոնց աշխատութեան պոռուցը անաշխատ վայելելով:
Թուրքերու այս տրամադրութիւնը, որ ցեղական է,
փոխանցուած է նաեւ տիրող կառավարութեան որուն
ամբողջ հիւստածքը բնորոշ այդ հակումին ամենէն
կատարեցածովս պատկերն է: Առաջին հարուածը կը
կրեն տկարները, աղքատները, երբ անոնց գործը վեր-
ջանայ, կարգը կուգայ մեծերուն:

Այս հասարակութիւնը անդադար կը կրկնուի մեր
պատկերուն հին բարի օրերէն մինչեւ մեր օրերը: Այն
ատենները երբ տակաւին «Ֆեւասնի» գոմիթէ, ներքը
գոյութիւն չունէին հայերուն մէջ, հայ հարուստներէն
և ոչ մէկը կրցած է կառավարութեան ճանկէն ազա-
տել: Հայերը իրենց խելքով, ճարպիկութիւնով, աշ-
խատութիւնով կը մեծնային կը գործնային Սուլթան-
ներու մայրաքաղաքին կամ գաւառական կեդրոննե-
րու մէջ, և ահա՛ մէկ օրուան, մէկ շաբաթուան մէջ
իրենց տարիներու քրտնաթոր աշխատութեան ար-
դիւնքը վրայ կուտային պետական հարուածով մը:

Առ մտածել թէ անցեալին մէջ թուրքիւն ա-
նուն մը ունէր որ յազարակիրի՛ք աշխարհը կը ստրկեց-
նէր: Իսկ հիսայ ուր թուրքիւն տնտեսական կայու-
թիւնը հինին հետ թողգատման արջիւն ևս նահան-
ջած է, որոնք տեղի գորաւոր պատճառներ ունի տի-
րող տարրը երկրին հարուստները ընդհանրապէս ու
հարստակ ցեղերը մասնաւորապէս կեղծեցը:

Թուրքիւն տնտեսական վատթար կացութիւնը
յայտարար նշան մը ըլլալու էր մեր հայ հարուստնե-
րուն՝ թէ հայ աղքատ դասակարգը տղտուկի պէս բաժ-
ուելէն յետոյ, կարգը իրենց պիտի գար:

Ի՞նչ ըրին մեր մեծատունները, ազաւանացող այս
վտանգէն օձիւրնին աղտոտելու համար:

Իրենց իրական շահերուն բոլորովին անգիտակ՝
հարստաշարեղ դասակարգին բողոքի տկար ձայնը
խեղդել ջանային շնորհակալութեան ու գահաւա-
կութեան ուղեբաններով:

Իրենց միտմտութեանը մէջ կարծեցին թէ տի-
րող կառավարութիւնը անգիտակ է իրենց համե-
մատական բարոյութեան ու այդ ճշմարտութիւնը
իրենց ուղեբաններէն ստղծելու պէտք ունի:

Նոյն այդ իրենց բարեկեցիկ վիճակն էր որ կա-
ռավարութեան փորին ցաւ կը պատճառէր և պատ-
կանեալ մարմինները սաղսլիակաւ ժպտաւ մը կը
կրկնէ անտարակոյս իրենց շրթներէն վրայ, կար-
գաւով գոհունակութեան այդ օրինակ գիրքը:

Սխալ կըլլայ մտածել թէ վերջին տարիներու
հայական շարժումները պատճառ եղան երկրին հայ
հարուստներու կործանումին: Անոնք աւելի զոհերը
եղան տիրապետող տարրին աւանդական հակում-
ներուն որոնք գանձային արտակարգ տագնապի մը
բերանաբ իրենց ծայրագոյն աստիճանին հասած էին
վերջերս: Հայկական շարժումներու բացակայութիւ-
նը թերեւս արիւնյալութեանց մէկ մասին առաջին
տոնէր, բայց երկրին հարուստներուն փճացումը
անխուսափելի էր պատական-տնտեսական օրէնք-
ներով: Արեւի էֆէնտի Ունեանը ո՛չ յեղափոխական
էր ո՛չ ալ յեղափոխականներու համակիր: Իր կա-
ցութենէն շատ գոհ մարդ՝ պէտք չէր զգար այդ-
պիսի խնդիրներով զբաղուելու՝ մտածելով որ անոնք
իր անձնական շահերը մտնէին կամ հեռուէն չէին
ըջափէր: Թուրք կառավարութիւնը ասիկա շատ
լաւ գիտէր, ասոր հետ մէկտեղ խեղճ մարդը օձիւրը
չի թցաւ աղաւթը մինչեւ մեծկակ գուժար մը վեր-
կանք չի տուաւ:

* *

Թուրքիւն հայ հարուստներուն կործանումը մեծ
գաւեր կուտայ մեզի: Աղքատը պէտք է ըմբռնէ
թէ իր դրացի հարուստը որքան ալ անտարբեր ե-
րեւի իր մասին, դարձեալ անուղղակի օգուտ մը կա-
րելի է սպասել անորմէ: Իսկ հարուստներն ալ
պիտեալու են որ երկրին կացութիւնը ինչ որ ալ
ըլլայ՝ ուշ կամ կանուխ հաւաստարար պիտի ուղղէ
ինչպէս աղքատին նոյնպէս իրենց վրայ: Եւ անհեր-
ք են հասարակաց կապերը որոնցմով միացած է աղ-
քատին շահը իրենց շահուն հետ: Աւ երբ ընդհա-
նուր վտանգ մը կը նշմարուի, ժամանակ չանցուած
երկուքը միասին խորհելու են դարձեալ իրենց վրայ: . . .

X

Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԸԼԼԱՆԻՔ

ՉՈՐՍ ԴԱՐ ԵՏՔԸ

Ամենքս ալ . . . խենդ:

Սրտերնիդ թու՛նք մի՛ հանէք: այս բառիս իրա-
կանացեան համար զեւ չորս հարիւր տարի պէտք է
մինչեւ այն ատեն ի՛նչ կըլլայ ի՞նչ չըլլար. բայց հի-
մալայ կրնար վատա՛ն ըլլալ թէ բառիս մէջ բառ
մը իսկ սուտ չի կայ: Հաշիւ ի ձեռին ձեւի պիտի
հաստատեմ որ Տեառն մերոյ 2301 թուականին,
մարդկութիւնը պիտի ըլլայ այնպէս ինչպէս որ են
Եւթի գութի պատասխարեալները: Եւ տուած փա-
տեքստ պիտի համոզուի թէ խնդիրը պարզ է . . .
բուռնութեամբ օրացոյցի մը պէտք:

Կանակա տուած Պարոն Հոլդ Եւթի իմաս-
տութեանը և վիճակագրական անընդունաւորութիւն հե-
ղինակութեանը, մատիտ ի ձեռին ձեւի պիտի հաշիւ
մը պիտի հանեմ որուն ճշգրտութեանը դուր ալ պիտի
գալանտար ես ալ:

1859ին Եւթուայի մէջ կատարուած մարդահա-
մար մը 535 խելացիի, այսինքն բանականութիւններ
տեղը եղող մարդոց դէմ՝ մէկ խենդ կը գտնէր.
Իսկ այսօր մէկ խենդ կայ 312 բնակիչի վրայ:

Այս յառաջատուութեան հաշուով, ասկէց 80
տարի ետքը, այսինքն 1977ին, 100 խելացիի վրայ
մէկ խենդ պիտի գտնենք. բայց 242 տարի ետքը՝
այդ համեմատութիւնը պիտի ըլլայ 10ի դէմ 1 և
վերջապէս 2301 թուականին չորս հարիւր տրամ-
ուղեղ ունեցող մը բոլորովին օչնչացած տիպար մը
պիտի դառնայ:

Եւ չեմ՝ կարծեք որ 2301ին կեանքը աւելի
անտանելի ըլլայ քան ինչ որ է այժմ. միայն թէ,
այն ատեն խենդ պիտի համարուին իրենց քսակէն
եկեղեցի կամ վարժարան շինողները, պարտք չու-
նեցող անհասները, զիտար սիրող զոյգերը, ամբ-
խածութեան պաշտնիւծ պայմաններով իրենց մեր-
կութիւնը ծածկողները, Եւթուայի մէջ թերթ հիւ-
նուները և այն կիները որոնք եղջիւրուոր պտակ
մը չեն դետեղեր իրենց ամուսնոյն ձախիւն վրայ:
Եթէ իմ ձեռքս ըլլար, չորս հարիւր տարի
եւս աչքս պիտի աւնէի այս անցուոր և յանցա-
ւոր կեանքին ամեն չարչարանքները կրել, միմիայն
այդ ժամանակուան բարբերը զիտելու համար երկնքի
մէկ ծակէն:

Բայց, խօսքը մէջերնիս, այս յոգնածը 2301ին
գրուած ըլլալու հովեր չունի՞, չիտակը ըսէ՛ք:

ՔԱՅԱՄԵՍ

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Միխայէլ փաշա Փորթուգալ, որուն մա-
նր ծանուցիւմ շաքաթի թուով վերջին վայր-
կենիւն, Պոլսոյ հայ հոռութեան կառարա-
կութեան պատիւ քերող անձնաւորութիւն
մըն էր՝ ո՛չ միայն իր բարձր դիրքով, թագ-
մակողմանի հետքերով ու ընկերային յա-
կոթիւններով, այլ մանաւանդ իր շայն ու
ազատ ըմբռնումով կրօնային թաժանումնե-
րուն, որոնցմով չէր կաշկալեցուած, եւ հա-
ւասարարեալ բարեկամ ու յարգելի էր ազ-
գին ամեն մասեցուն: Մեր Պատրիարքարա-
նի կողմէն եպիսկոպոս մը՝ Բաբի մը վար-
դապետներով ու հայ բողոքականներու ազ-
գապետք Օրթուգալի Ս. Լուսաւորիչ եկեղե-
ցիին մէջ ներկայ գտնուած եւ յորհուրդա-
ւորութեան հանդէսին:

Հանգուցեալը իր դաստիարակութիւն
առած էր Բարիզի Մուրա-Ռաֆայելեան
վարժարանին մէջ, եւ իր դասընկերներէն
եւ Եւթուայ Արքիմ փաշա, Միխայիլ խան,
Մանուէրեան եւ Ժամանակակից ուրիշ ծա-
նօթ հայեր: Ուսանողութեան թուականէն
սիրող էր գրականութեան եւ յօդուածներ
հրատարակած ունի Բազմապէսին մէջ: Ու
Պոլիս վերադարձէն ետքն, ուր պէսական

ժառանգութեան մատ, իր վարած բոլոր կա-
րեւոր պաշտօններու միջոցին (1) նոյն իսկ
երբ անուանեցաւ նախարար կաշտեակիւն
անձնակալ Դաւան (Liste Civile), կը շարու-
նակէր ըզրադիւ ազգ. մասեցումներու,
ու պատմութեան. կեանքին միջոց վերջը
ամենամեծ գրադարմանումն մեջեղ, միշտ
ժամանակ կը գտնէր գրական աշխատ-
քիւններու որոնք սիրելի էին իրեն, չի
նմանելով քնաւ Պոլսոյ այն կարգ մը հայ
եւթեցիներուն որոնք ձեռնարկէին հայերէն
գիրք մը առնելու իսկ կը վարանին: Ուրբա-
ր եւ կիրակի օրեր, իր սան մէջ առանձնա-
ցած, հայ մասեցումներու կը գրադէր:

Միխայէլ փաշա Փորթուգալ, որ քաջ ըզ-
նազէտ էր, հին հայերէնի եւ պարսկերէնի
բաղդասական ուսումնասիրութեան վրայ
ձեռագրէր ունի. քոյած է նաեւ եղիշէի
մասեցումներուն վրայ ընդարձակ ու հըմ-
աշից ուսումնասիրութիւն մը որ վեհեցի
դրկուած է ուր պիտի սպագրուի Հ. Ղեւոնդ
Այիւալի կողմէ գրուած յառաջարկով մը:

(1) Իր անդամակալ պաշտօնը եղաւ քա-
տուղարութիւն Այի փաշայի քով, որուն ընկե-
րացաւ ի Երեւոյ: Իր նախապետական ճիւղն
ըլլալով եւրոպայեանութիւն ու անտեսագիտու-
թիւն, այդ ասպարէզին մէջ առաջացաւ հետ-
զհետէ. նախ և առաջ տեսուչ Ղալաթիոյ մար-
տառան, ապա նախագահ մաքսային ժողովին,
շատ մը կարիւր ծրարներ ընդունել տուաւ
ու բարեկարգութիւններ ներմուծեց այդ վար-
չութեան մէջ: Իր կարողութիւն գնահատուե-
լով, բարձրացաւ եւրոպական նախարարութեան
խորհրդականի պաշտօնին, որու միջոցին
ստանձնեց նաեւ տնտեսապիտութեան գաւա-
լանութիւն մը Պոլսոյ Բազմապէսին վարժարանին
մէջ: Երկրագործական գրամատան ծրարիւն իր
հեղինակութիւնն է և ինք եղաւ առաջին վե-
րատեսուչն այդ հաստատութեան զոր կազմա-
կերպեց: Յակոբ փաշայի մահէն ետք, անուան-
ուեցաւ կայս. անձնական Դաւան նախարար:
Իրեն կը յաջորդէ Սադրը Յովհաննէս Էֆէնտի,
ոչ նուազ յարգելի և հմուտ անձնաւորութիւն
մը, քաջ եւրոպացի, անտեսագէտ ու ինքն ալ՝
իր պարագայ ժամերուն մէջ՝ բանասէր:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Թիւրքական բանակին Թեալիայէ հեռաց-
ման խնդիրը եւրոպական մէկ քանի Տէրու-
թեանց ուղղութեան աւարկայ կը դառնայ
նորէն: Ռիւզ-Էրի հեռագրի մը նայելով, Ռու-
սիա՝ Ֆրանսայի համախոհութեամբ՝ հրաւիրե-
ր է Դուռը եւս կանչել իր զինուորները որոնք
սակայն ձմեռային ամեն նախապատրաստու-
թիւն տեսած՝ սեղաւորուած են նորընտաց
գաւառին մէջ ու տեղերնուն շարժելու շատ
միտք չունին:

Դաւով Կրէտէի, Տէյիի Նիսիի Պէրլիի
թիւրքական լուր մը կը հաղորդէ, իւր թէ Տէ-
րութիւնները կը խորհրդակցին եղբւ նաւային
ցոյց մը ընել կամ նոյն իսկ Կ. Պոլսը պա-
շարել այն պարագային ուր Սուլթանը չուզէ
համակերպիլ Կրէտէի ինքնորինութեան և մա-
նաւանդ իր զօրքերը դուրս հանել կղզիէն:

Նաւային ցոյցի սպառնալիքներ այնքան

անգամներ վերագրուած են եւրոպական Տէ-
րութիւններուն ու բնաւ չի գործադրուած, որ
Անգլիոյ ազատական թերթին այս լուրն ալ
արգահատանք ու ծիծաղ միայն կը շարժէ:

—Երէկուան Բոսկիւրէի մէջ կը կարգանք.
«Կ. Պոլսէն առնուած լուրերու նայելով,
թուրք ստորկանութիւնը նախորդ շարժումն
հինգ հարիւրի չափ հայեր ձերբակալեր է՝
պատրուակելով թէ գտնել կուզէ յեղափո-
խական գոմիթէի մը վեց անդամները որոնց
ներկայութիւնը իմացած է եղեր:

«Հայոց Պատրիարքը բողոքեր է Գուռը և
Պալատը, հալածանքի այս նոր միջոցներուն
դէմ»:

—Կրէտէի ընդհանուր ժողովը յայտա-
բարութիւն մը հրատարակելով է՝ ծովակալնե-
րուն կողմէ իր խնդրանքներուն տրուած պա-
տասխանն հաղորդելով և հրաւիրելով յոյն ժո-
ղովուրդը իսլամներու կալուածներուն չի դա-
շիլ: Կ. Պոլսոյ գերմանական դեսպանն իմա-
ցուցեր է իր պաշտօնակիցներուն թէ Քալմէ-
րին-Ալիուսքա մարտանաւին միջոցաւ կ'զգիեն
հեռացող գերման զօրագունքին տեղ ուրիշ
մը պիտի գայ Տէօյնէն մարտանաւով:

Թալմզ խմբագրականի մը մէջ կըսէ թէ
կրէտէի կացութիւնը դայթակղութիւն մըն է
Եւրոպայի համար որ կ'զգիին վարչութիւնը ա-
ռաւ օսմանցոյ ձեռքէն՝ պատրուակելով թէ
Տէրութիւնը պիտի կրնան բարեկարգութիւնը
հաստատել հոն ու մինչեւ այսօր դեռ ո՛չ իսկ
կառավարչի մը ընտրութեան վրայ կըցան հա-
մաձայնիլ:

—Մէրսինի ծանօթ միջադէպին առթիւ
թուրքիոյ կողմէ արուելիք գահացումը սա ձե-
ւակերպութեամբ պիտի կատարուի: Կ. Պոլսոյ
աւտորիական դեսպանատան առաջին թարգ-
մանը անձամբ կերթայ իր կառավարութիւնը
ներկայացունել այդ նաւահանգիստին մէջ ուր
հարկ եղած պաշտօնական պատիւները պիտի
ընծայուին աւտորիական գրօշին, ի փոխարէն
այն անարգանքին որ եղած էր Ֆրանսի Եօսէֆ
կայսեր մէկ հպատակին ազատութեան, արժա-
նապատութեան ու ապահովութեան՝ օամ հո-
ղին վրայ:

Երջանիկ արարածներ, օտար հպատակ-
ները . . .

Ատանայի կուսակալին ու Մէրսինի կա-
ռավարչին պաշտօնակալութիւնն ալ ծանուցինք
արդէն: Առաջին պաշտօնը յանձնուեր է Ա-
տանայի զինուորական հրամանատար Շաքիր
փաշայի ու երկրորդը՝ Ատանայի կուսակալի
օգնական Հաճի Բէշիս փաշայի:

—Հավասի Բարիզեան գործակալութիւնը
այս օրերս եւրոպական թերթերուն հաղորդեց
Բեդրապուրկէ իր ստացած մէկ հեռագիրը որ
կը հերքէ այն լուր թէ Ռուսիա կընդգրկմանայ
որ թուրքիա նաւային սպառազինութիւնը
յատկացունէ Յունաստանէ ստանալիք սլաւոն-
րազմական տուգանքը և այլն: Հակառակ այս
հերքման, դարձեալ կը հաղորդուի Կ. Պոլսէ
թէ ռուսական դեսպանատունը հետեւեալ ի-
մաստով զեկոյց մը Երբեր է Դրան.

«Ռուսիա չուզեց իր պատերազմական
տուգանքը պահանջել թուրքիայէն, անոր դըժ-
ուարին վայրկեաններուն մէջ. բայց հիմակ որ
Դուռը որոշած է իր նաւային զօրութիւնն ա-
ւելցունել, բան մը որ չի համապատասխաներ

արդի կացութեան, Ռուսիա կուզայ պահան-
ջել իր առնելիքին մէկ մասն այնպէս ինչպէս
ըրաւ Աւստրիա՝ արեւելեան երկաթուղիներու
հաշուէն ունեցած պահանջքի մասին»:

Դուռը պատասխաներ է թէ ինք տակաւին
որոշում մը տուած չէ նաւային սպառազին-
ութիւններու մասին:

—Պէրութէն կը հեռագրեն բարիպեան
թերթերուն.

«Նոյեմբեր 13էն 21, Լիբանանու Փրիլի
վանքին մէջ տեղի պիտի ունենար Սինոդա-
կան ժողով մը, ընտրելու համար յաջորդ մը
Յոյն-կաթոլիկներու Պատրիարք Տ. Կրէկուսոս
Եուսուֆի որ վախճանեցաւ անցեալ յուլիսին:

«Պապական Նուիրակ Տ. Տիւմալ ներկայ
պիտի գտնուէր այդ ժողովին, երբ նաւում փա-
շա՝ Լիբանանու կառավարիչը, ազգարարեց
յոյն-կաթոլիկ եպիսկոպոսներուն թէ Բ. Դուռը
իբր չեղեալ պիտի նկատէր այդ ընտրութիւնը
եթէ օտարի մը ձեռնմխութեամբ տեղի ու-
նենար: Այս պեկուցումին վրայ, պապական
նուիրակը անորոշ թուականի մը յետո՞ք
ժողովին յաջորդ նիստը:

«Տեղւոյն ընդհ. հիւպատոսը խնդիրը տե-
ղեկագրած է Պոլսոյ ֆրանսական դեսպանա-
տան և առանձնաշնորհումի այս բռնաբարման
դէմ բողոքելով խնդրած է Պ. Քանայոնէ պէտք
եղած միջոցները ձեռք առնել Բ. Դրան մօտ՝
ապագային խոշնգոտներու առաջքը առնելու
համար երբ յոյն կաթոլիկ հասարակութիւնը
Պատրիարք մը ընտրելու հարկին մէջ կը գըտ-
նուի:

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի օրը տեղի ունեցաւ Տիար և Տի-
կին Անան Արթինօֆի ընակարանին մէջ յԱ-
ղեքանդրիա, իրենց համակրելի աղջկան Օր-
Մառի Արթինօֆի նշանախօսութիւնը Տիար Մ.
Անանեանցի հետ:

Տիար Անանեանց՝ Մանթաշոֆ հանրա-
ծանօթ տան Գահիրէի ճիւղին տնօրէնը, ներ-
կայացնելու պէտք չէր զգար: ամբողջ Գա-
հիրէ կը ճանչնայ այդ յարգելի երիտասարդը
որ իր զգացումներով, գործունէութեամբ և
առեւտրական հրապարակին վրայ բռնած
պատուաւոր գիրքով Եգիպտոսական հայ երի-
տասարդութեան փայլուն անդամներէն մէկն է:

Օրիորդ Մառի Արթինօֆ կը պատկանի
Աղեքանդրիոյ մէջ ծանօթ և յարգուած ըն-
տանիքի մը: Մանկամարդ օրիորդը իր անձին
վրայ կը միացնէ մտաւորական և բարոյական
այնպիսի յատկութիւններ որոնցմով քիչեր օժ-
տուած են:

Բոլոր զինքը մտէն ճանչցողները միշտ
հիացում ունեցած են իր սրտի ազնուութեան
և իր պարկեշտ կենցաղագիտութեան վրայ:
Եթէ ասոնց վրայ աւելցունենք իր ֆիզիքա-
կան առաւելութիւնները, ներկայացուցած պի-
տի ըլլանք մեր գեղեցիկ սեռին ամենէն կա-
տարեալ մէկ տիպարը:

Նշանախօսութեան այս լուրը — Փարոսի
անդրանիկը — գահուակալութիւն պիտի պատ-
ճառէ անշուշտ երկու կողմի բարեկամներուն
որոնց միացած՝ խմբագրութիւնս իր ջերմ շնոր-
հաւորութիւնները կը յայտնէ իր բարեկամ
Տիար Անանեանցի և Արթինօֆ ընտանեաց:

Խտիվական վերջին շոգենաւով Եգիպ-
տոս հառաւ Պոլսոյ առեւտրական հրապարա-
կին վրայ ծանօթ Տիար Վահրամ Ս. Մանուկ-
եան որ կուգայ Գահիրէի մէջ հաստատել
ճիւղ մը իր կարեւոր վաճառատան:

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր. Խտիվն աղջիկ զաւակ մը ունե-
ցաւ: Նորածին իշխանուհին ու մայրն առողջ
վիճակի մէջ են:

Բարձր. Մայր Խտիվուհին՝ իր թուան
ծնունդը իմանալուն՝ Մոնթաշոֆ փութաց ուր
պիտի մնայ քանի մը օր:

Խտիվական գերդաստանի բոլոր իշխան-
ներն ու իշխանուհիները, ինչպէս նաեւ նա-
խարարները խնդակցական հեռագրեր ուղղե-
ցին Խտիվին ի Մոնթաշոֆ: Ն. Բարձրութիւն
այս իրիկուն Գահիրէ կը վերագաւաճայ, վաղն
առաւօտ նախագահելու համար նախարարաց
խորհրդոյ նիստին:

Շաբաթ օրը Ապալինի պալատին մէջ ըն-
դունելութիւն պիտի կատարուի:

—Տեղացիներու խումբ մը յաջողած է
վերջապէս իրեն յատուկ տեղ մը ունենալ 1900ի
բարիղեան արուեստահանգէսին մէջ: Փրան-
սացիի մը որուն անունը դեռ գաղտնի կը
պահուի, առատաձեռնութեան և անկեղծ-
ութեան կը պարտին այս դիւրութիւնը որով
արտօնուեցան Եգիպտոսը ներկայացնել Թրօ-
քատէրօյի մէջ:

Հետեւապէս Եգիպտացիներն ալ, ո՛ր աղ-
գէ ալ ըլլան, պիտի կրնան մասնակցել այդ
փառաւոր արուեստահանգէսին:

ԱՐՏԵՄԻՍԻԱ

ԱՐՔԱՅԱԿԱՆ ՆՈՐԱՎԷՊ

Սերպիոյ նախորդ վեհապետը նորէն կը
զբաղեցունէ քաղաքական աշխարհը իր . . .
կնովական կամ սիրային խնդիրներով: Երկ-
րորդ անգամ կարգուելու միտք ունի եղեր
և Պէրկրատի մէտրապոլիտին դիմեր է խնդ-
րելով որ կատարեալ ամուսնալուծում հռչակ-
ուի իր և Նաթայի թագուհիին միջեւ Մետ-
րապոլիտը բացարձակապէս հակառակել է
այս առաջարկին:

Միլան թագաւորին ամուսնանալ բաղձա-
ցած կինը մանկամարդ հեղինակ մըն է,
բնիկ Կ. Պոլսեցի, ուր կը բնակի հիմակ իր
հօր քով և զաւկին հետ սրուն Օպրէն անու-
նը տուած է՝ հաստատելու համար թէ իրօք
Օպրէնովիզ գերդաստանէն է, այսինքն Սեր-
պիոյ արքայական ցեղէն: Արտէմիսիա, Նա-
թայի թագուհիին միջակիցը, ամուսնացած էր
Պ. Միլան Գրիսթիլի հետ, նախկին մասնաւոր
բարտուղարը Միլան թագաւորին, այդ թուա-
կանին դեռ գահէն չի հրաժարած, որ զայն
Պէրլին խրկեց իրեւ դեսպան, պայմանաւ որ
. . . կինը Պէրկրատ մնայ: Արտէմիսիա ան-
կից յետոյ բաժնուեցաւ իր էրիկէն: Պէրկրա-
տի մէջ, երբ այս գայթակղական լուրերը
տարածուեցան, սիրուն բառախաղ մը կը շըր-
ջէր բերնէ բերան. «Սերպիոյ ամենէն տարի-
քոտ կինը մատամ Գրիսթիլին է, կըսէին,
վանդի elle a deux Milan» — բառախաղ մը որ
հայերէնի չի կրնար թարգմանուիլ: Կը պատ-
մուի իսկ թէ գեղանի Արտէմիսիան իր սիրա-
յին յարաբերութեան առաջին օրերէն զրա-
ւոր խոստում առեր է եղեր Միլան թագա-
ւորէն թէ իր հետ պիտի ամուսնանայ օրին
մէկը, և թէ իր էրիկէն բաժնուելէն ետք
այնքան խիստ կերպով պահանջեր է այս խոստ-
ման գործադրութիւնը որ վեհափառ սիրա-
հարը բարձր միջամտութիւններու և մեծակ
գումարի մը շնորհիւ միայն յաջողեր է ձեռք
անցունել իր նամակները: Տիկին Գրիսթիլ

